

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԿԿ-ՄԱԾՁԲ-26/10**

ք. Երևան

«20» 03 2026թ.

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Աշոտ Վարդանյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միջուկային և ռադիոակտիվ անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Ամիրջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 67,577,550 (վաթսունյոթ միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագրի կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:


8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ միջուկային անվտանգության
կարգավորման կոմիտե
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ գործառն վարչ.
ՀՀ 900011040020
ՀՎՀՀ 02705793
Գլխավոր քարտուղար
Ա.Վարդանյան

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Միջուկային և ռադիացիոն
անվտանգության գիտատեխնիկական
կենտրոն» ՓԲԸ
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
Ինելկոբանկ
ՀՀ 2052022100061001
ՀՎՀՀ 02558849
Տնօրեն
Ա.Ամիրջանյան


(ստորագրություն) Կ.Տ.


(ստորագրություն)

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը համապատասխան հավելվածներ:




ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Որամ»


Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գինը/«Որամ»	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	50531140-1	«Որամ» միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի կարիքների համար փորձաքննության ծառայության (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի N° 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման մանրամասն տեխնիկական բնութագիրը բերված է հավելված 1.1-ում Փորձաքննության ծառայությունների մատուցման համար պահանջվում է լիցենզիա: Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծման և այլ փաստաթղթերի փորձաքննության ԼիՑենզիա	որամ	67577550	1	Ք.Երևան Տիգրան Մեծի 4	25.12.2026

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տրված փորձաքննության 25-ը:
 ** Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են համաձայն Պատվիրատուի կողմից առաջարկված պատվեր - առաջադրանքների:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
 «Որամ» միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
 «ՖՆ» գործառն վարչ.
 ՀՀ 900011040020
 ՀՎՀՀ 02705793
 Գլխավոր քարտուղար
 Ա.Վարդանյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
 «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
 Ինելկոբանկ
 ՀՀ 2052022100061001
 ՀՎՀՀ 02558849



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2026 թվականին ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման

1. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության փորձաքննություն

1.1 Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության գնահատում, տեխնիկական որոշումների, կարգավորող փաստաթղթերի նախագծերի, մոդիֆիկացիաների անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի, միջուկային և ճառագայթային վտանգ ներկայացնող աշխատանքների կատարման ծրագրերի, սեյսմիկ անվտանգության վերագնահատման ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերի և միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերող այլ փաստաթղթերի գնահատում և փորձաքննություն:

- Ներկայացված տեխնիկական որոշումների, մոդիֆիկացիաների անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի և ծրագրերի, միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերող այլ փաստաթղթերի ամբողջականության ստուգում:
- Անվտանգության պահանջների և չափորոշիչների համապատասխանության ստուգում (անհրաժեշտության դեպքում կատարելով ստուգողական հաշվարկներ):
- Ներկայացված անվտանգության հիմնավորումների և հաշվարկների, նախագծային լուծումների ստուգման համար սեփական մաթեմատիկական մոդելի ձևափոխում և վերլուծությունների կատարում (անհրաժեշտության դեպքում):
- Փորձագիտական եզրակացության մշակում:

1.2 ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոյու 38-րդ բեռնավորման նեյտրոնաֆիզիկական բնութագրերի փորձաքննություն: ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոյու վերաբեռնավորման ծրագրի փորձաքննություն: Ակտիվ գոյու ու միջուկային վառելիքի հետ աշխատանքների անվտանգության հիմնավորման գնահատում:

- Ներկայացված ինֆորմացիայի ամբողջականության ստուգում:
- Ներկայացված հաշվարկների ստուգման համար կենտրոնի կողմից PARCS-RELAP և PARCS-PATHS ծրագրերով մշակված ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ակտիվ գոյու մաթեմատիկական մոդելի ձևափոխում:
- Ստուգողական հաշվարկների և փորձագիտական գնահատականների կատարում:
- Ներկայացված անվտանգության հիմնավորումների և ծրագրերի վերաբերյալ փորձագիտական գնահատականների կատարում:
- Եզրակացության մշակում:

1.3 Նոր ԱԷԿ-ի լիցենզավորման նախապարաստական աշխատանքներ:

- Փոքր մոդուլային ռեակտորների (Hitachi, Holtec) անվտանգության առանձին համակարգերի ուսումնասիրություն՝ պարզելու համար դրանց համապատասխանությունը ազգային միջուկային անվտանգության պահանջներին:
- Նոր ԱԷԿ-ի տեխնիկական պահանջների դիտարկում ազգային և ԱԷՄԳ միջուկային և ռադիացիոն անվտանգության պահանջներին համապատասխանությունը պարզելու համար:
- Միջուկային վառելիքի կիրառելիության տեխնիկատնտեսական հիմնավորման դիտարկում, միջուկային վառելիքի լիցենզավորման պլանի մշակում:
- Նոր ԱԷԿ-ի կառուցման/շահագործման ժամանակ ՀՀ ՄԱԿԿ-ի մասնագիտական պահանջների (նոր պաշտոնների) որոշում, պաշտոնների ցանկի կազմում:

2. ՀՀ ՄԱԿԿ-ի գործունեությունն ապահովող գիտահետազոտական աշխատանքներ և կարգավորող փաստաթղթերի մշակում/լրամշակում

2.1 Գիտահետազոտական աշխատանքներ

2.1.1 Արժույթի էներգիայի օգտագործման օբյեկտների վթարային իրավիճակներում որոշումների կայացմանն աջակցող JRODOS համակարգի կիրառմամբ ՀԱԷԿ-ի տարբեր վթարային իրավիճակներով պայմանավորված արտանետումների հետևանքով ճառագայթային հետևանքների գնահատում և վերլուծություն:

JRODOS համակարգը հանդիսանում է ԱԷԿ-ների վթարային արտանետումներով պայմանավորված շրջակա միջավայրի և բնակչության վրա ճառագայթային ազդեցության և հետևանքների գնահատման, ինչպես նաև հակազդման և պաշտպանության գործողությունների պլանավորման հաշվարկային մոդելավորման գործիք: Այն ունի հնարավորություն գնահատելու ճառագայթային հետևանքները ինչպես իրական եղանակային կանխատեսումների, այնպես էլ արհեստական եղանակային պայմանների կիրառմամբ՝ որպես ծանրագույն սպասվելիք հետևանքների առաջացման պայմաններ:

Սույն խնդրի շրջանակներում նախատեսվում իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Խնդրի ելքային (դիտարկված վթարային սցենարներով պայմանավորված դեպի շրջակա միջավայր արտանետված ռադիոիզոտոպային կազմ «source term») տվյալների մշակում RELAP և COCOSYS ջերմահիդրավիկ պրոցեսների մոդելավորման գործիքների միջոցով (2-3 սցենար):
- JRODOS համակարգում վթարային արտանետման մոդելների մշակում և «source term»-երի մուտքագրում:
- Դիտարկվող վթարային սցենարների համար ճառագայթային հետևանքների գնահատում և վերլուծություն:
- Ստացված արդյունքների վերաբերյալ հաշվետվության մշակում:

2.1.2 ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված անվտանգության հիմնավորումների, մասնավորապես ճառագայթահարման դոզայի հաշվարկի անկախ գնահատում:

ՀԱԷԿ-ի մոդիֆիկացիաների անվտանգության հիմնավորումները պետք է ցույց տան, որ պահպանվում են անվտանգության չափորոշիչները: Կարևորագույն չափորոշիչ է վթարների դեպքում բնակչության ճառագայթահարման դոզան: Ճառագայթահարման դոզայի հաշվարկը հիմնվում է վթարի զարգացում ուսումնասիրող այլ հաշվարկների արդյունքների վրա: Հաշվարկները պարունակում են անորոշություններ, որոնք ազդում են վերջնական արդյունքի՝ ճառագայթահարման դոզայի ճշգրտության վրա: ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված անվտանգության հիմնավորումները, մասնավորապես ճառագայթահարման դոզայի հաշվարկն անհրաժեշտ է ենթարկել անկախ գնահատման: Տվյալ աշխատանքի նպատակը ՀԱԷԿ-ի հերմետիկ սրահներում տեղի ունեցող ջերմահիդրավիկ պրոցեսների ուսումնասիրության համար նախատեսված մոդելի կատարելագործումն է՝ ավելացնելով ռադիոակտիվ աէրոզոլները մոդելավորող մաթեմատիկական մոդելը, որը թույլ կտա կատարել արտանետվող ռադիոիզոտոպների քանակի ճշգրիտ հաշվարկ:

Սույն խնդրի շրջանակներում նախատեսվում իրականացնել հետևյալ աշխատանքները.

- COCOSYS հաշվարկային ծրագրային համակարգի հիման վրա աէրոզոլային մոդելի մշակում:
- Յոդի և դրա քիմիական միացությունների դեպի արտաքին միջավայր արտանետման դինամիկայի մոդելի մշակում:
- Բաժանման արգասիքների տեղաշարժի մոդելի մշակում:
- Մշակված առանձին մոդելների ներդրում COCOSYS հաշվարկային ծրագրային համակարգի հիման վրա մշակված ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի հերմետիկ սրահների մաթեմատիկական մոդելում:
- ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի հերմետիկ սրահների մաթեմատիկական մոդելի կատարելագործված տարբերակի կիրառմամբ ՀԱԷԿ-ի առավելագույն նախագծային վթարի դեպքում արտանետված ռադիոակտիվ իզոտոպների դինամիկայի հաշվարկ:
- Հաշվարկի արդյունքների վերլուծություն, հաշվետվության մշակում՝ ներառյալ ՀՀ ՄԱԿԿ-ի գործառույթներում կատարելագործված մոդելի կիրառության մասին եզրակացության մշակում:

2.1.3 ՀԱԷԿ-ի նախագծային վթարների դեպքում RADTRAD ծրագրային միջավայրում դոզայի հաշվարկման մեթոդաբանության և հաշվարկային տրամաբանության ուսումնասիրություն:

Նախագծային վթարների դեպքում կայանի անվտանգության համակարգերի նախագծային աշխատանքի պայմաններում բնակչության վրա էական ճառագայթային ազդեցություն չի ակնկալվում: Այնուամենայնիվ, կարգավորող գնահատման շրջանակում իրականացվում են պահպանողական դոզիմետրիկ հաշվարկներ՝ ստուգելու համար, որ հնարավոր արտանետումների դեպքում բնակչության դոզաները բացառման գոտու սահմանում (Exclusion Area Boundary - EAB) և ցածր բնակեցվածության գոտում (Low Population Zone - LPZ), ինչպես նաև բլոկային ղեկավարման վահանակի սրահում (Control Room) չեն գերազանցում սահմանված նորմատիվ սահմանները:

Խնդրի նպատակն է ուսումնասիրել RADTRAD ծրագրային միջավայրում նախագծային վթարների դեպքում ճառագայթային դոզայի հաշվարկման մեթոդաբանությունն ու հաշվարկային տրամաբանությունը՝ ՀՀ ՄԱԿԿ-ի կարգավորող գործունեության շրջանակում կիրառման հնարավորությունների գնահատման նպատակով:

Սույն խնդրի շրջանակներում նախատեսվում իրականացնել հետևյալ աշխատանքները.

- RADTRAD ծրագրի կառուցվածքի և նախագծային վթարների սցենարների համար դոզայի հաշվարկման ընդհանուր մեթոդաբանության ուսումնասիրում:
- Ծրագրում կիրառվող հիմնական ենթադրությունների, սահմանափակումների և պահպանողական մոտեցումների ուսումնասիրում:
- RADTRAD մոդելում ռադիոնուկլիդների արտանետման, տեղափոխման և դուրսբերման հիմնական մեխանիզմների դիտարկում:

- Բացառման գոտու սահմանում, ցածր բնակեցվածության գոտում և բլոկային ղեկավարման վահանակի սրահի համար բնակչության դոզայի հաշվարկման մոտեցումների ուսումնասիրում:
- RADTRAD ծրագրի կիրառմամբ ընտրված նախագծային վթարի փորձնական մոդելավորման իրականացում:
- Ստացված արդյունքների վերլուծություն՝ մեթոդաբանական ենթադրությունների և սահմանափակումների տեսանկյունից:
- ՀՀ ՄԱԿԿ-ի կարգավորող գործունեության շրջանակում RADTRAD ծրագրի կիրառելիության գնահատում:
- Հաշվետվության մշակում:

2.1.4 Ռեակտորի ակտիվ գոտու վթարային լրասնման համակարգի մոդիֆիկացիայի հնարավոր տարբերակների անվտանգային ազդեցության համադրական վերլուծություն Risk-Spectrum PSA ծրագրային միջոցի նոր տարբերակի կիրառմամբ:

Խնդրի նպատակն է իրականացնել Risk-Spectrum PSA ծրագրային միջոցի նոր տարբերակի կարողությունների ուսումնասիրում և դրանով վթարային լրասնման համակարգի մոդիֆիկացիայի հնարավոր տարբերակների մոդելների մշակում, ակտիվ գոտու վնասման հաճախության արժեքի փոփոխության և համակարգի խափանման հաճախության վերահաշվարկ յուրաքանչյուր տարբերակի համար: Արդյունքում կվերլուծվի վթարային լրասնման համակարգի մոդիֆիկացիայի հնարավոր կոնֆիգուրացիաների տարբերակների անվտանգային ազդեցությունը, կմշակվեն մոդիֆիկացիաների տարբերակների մոդելներ:

Խնդրի իրականացման վերջնարդյունքում մոդիֆիկացիայի տարբերակների համար մշակված մոդելներից հետագայում համակարգի մոդիֆիկացիայի համար ՀԱԷԿ-ի կողմից ՀՀ ՄԱԿԿ ներկայացվող փաստաթղթերի փաթեթը դիտարկելիս կարող է ընտրվել մոդիֆիկացիայի որոշված տարբերակին համապատասխան մոդելը, որը կարելի է ադապտացնել ընտրված մոդիֆիկացիայի վերջնական տարբերակին համապատասխան՝ ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից մոդիֆիկացիայի թույլտվություն տրամադրելու որոշման կայացման գործընթացում համակարգի մոդիֆիկացիայի ազդեցության քանակական անկախ գնահատում իրականացնելու նպատակով:

Սույն խնդրի շրջանակներում նախատեսվում իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Risk-Spectrum PSA ծրագրային միջոցի նոր տարբերակի ֆունկցիոնալության, գործիքակազմի և ավելացված նոր ֆունկցիաների ուսումնասիրություն:
- Risk-Spectrum PSA ծրագրային միջոցում մշակված ՀԱԷԿ-ի մոդելի տեղափոխում ծրագրի նոր տարբերակ:
- Risk-Spectrum PSA ծրագրային միջոցում վթարային լրասնման համակարգի մոդիֆիկացիայի հնարավոր տարբերակների մոդելների մշակում, ակտիվ գոտու վնասման հաճախության արժեքի փոփոխության և համակարգի խափանման հաճախության վերահաշվարկ յուրաքանչյուր տարբերակի համար:
- Կատարված վերլուծությունների ամփոփիչ հաշվետվության մշակում:

2.2 Կարգավորող փաստաթղթերի մշակում/լրամշակում:

2.2.1 ՀՀ-ում միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման բնագավառում առկա իրավիճակի գնահատում և բնագավառի լավարկման վերաբերյալ առաջարկները հաշվի առնելով՝ ՀՀ կառավարության 13.07.2002թ. «Միջուկային և ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման կարգը հաստատելու մասին» թիվ 931-Ն որոշման լրամշակում:

- Փոխադրման կարգի լրամշակում:
- Լրամշակված կարգի քննարկում ՀՀ ՄԱԿԿ-ի հետ:
- Քննարկման արդյունքներով՝ նախագծի ամփոփում և ներկայացում ՀՀ ՄԱԿԿ:

2.2.2 «Ակոմային էներգիայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի լրամշակում:

- ԱԷԿ, ԵՄ և ԱՄՆ փորձագետների փորձաքննությունների արդյունքների հիման վրա օրենքի նախագծի լրամշակում:
- Շահագրգիռ մարմինների առաջարկությունների հիման վրա նախագծի լրամշակում:
- Մասնակցություն ՀՀ ՄԱԿԿ-ում և միջազգային առաքելությունների շրջանակում կազմակերպված օրենքի նախագծի քննարկումներին:

2.2.3 ԵՄ հարմոնիզացիայի շրջանակում գործողությունների ծրագրով սահմանված նախագծերի մշակում:

- ԵՄ հարմոնիզացիայի գործողությունների ծրագրով սահմանված աշխատանքների (փաստաթղթերի մշակում/լրամշակում) ցանկի դիտարկում, առաջնահերթությունների և կատարման ժամկետների որոշում, և դրանց համաձայնեցում ՀՀ ՄԱԿԿ-ի հետ:
- 2-3 (կախված ծավալից) առաջնահերթ խնդիրների իրականացում (փաստաթղթերի մշակում/լրամշակում):
- Մշակված/լրամշակված փաստաթղթերի նախագծերի ներկայացում ՀՀ ՄԱԿԿ:
- Կոմիտեի և, անհրաժեշտության դեպքում, միջազգային կազմակերպությունների դիտարկման արդյունքներով նախագծերի լրամշակում:
- Փաստաթղթերի վերջնական տարբերակների ներկայացում ՀՀ ՄԱԿԿ:

3. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության հսկողության գործընթացին աջակցող աշխատանքներ

3.5 Աջակցություն ՀՀ ՄԱԿԿ-ի վթարային կենտրոնի աշխատանքներին:

- Վթարային կենտրոնի աշխատանքի կազմակերպման շարունակական բարելավում և արդիականացում:
- Վթարային կենտրոնի ընթացակարգերի (կազմակերպչական ընթացակարգեր) լրամշակում:
- Մասնակցություն ՀՀ ՄԱԿԿ-ի վթարային կենտրոնի վարժանքների և քաղաքացիական պաշտպանության վարժանքների կազմակերպմանը և անցկացմանը, արդյունքների գնահատում:

4. Նոր մասնագետների պատրաստում ՀՀ ՄԱԿԿ-ի համար

4.1 ՀՀ ՄԱԿԿ-ի համար նոր մասնագետների պատրաստման աշխատանքներ (1 պատրաստվող մասնագետ):

- Մասնագետի պատրաստման ծրագրի մշակում/վերամշակում:
- Մասնագետի պատրաստման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակում/վերամշակում:
- Նոր պատրաստվող մասնագետի համար դասընթացների փուլերի կազմակերպում և անցկացում:
- Նոր պատրաստվող մասնագետի գիտելիքների պարբերական ստուգում:

5. Շրջակա միջավայրի ճառագայթային մոնիտորինգ

5.1 Վաղ ահազանգման ռադիացիոն մոնիտորինգի համակարգի (EWRMS - Early Warning Radiation Monitoring System) շահագործում և սպասարկում:

- Թվով 32 ստացիոնար ռադիացիոն մոնիտորինգի կայանների և թվով 2 շարժական սպեկտրոմետրիկ կայանների պարբերական սպասարկման աշխատանքների կազմակերպում և իրականացում, համակարգի աշխատունակության և ֆիզիկական ամբողջականության ապահովում:
- Հաշվետվության մշակում:

5.2 Հնարավոր ռադիոիզոտոպներ պարունակող նյութերի ճառագայթային մոնիտորինգ:

Տարբեր նյութերը, այդ թվում՝ շինանյութերը, սննդամթերքը, սպառողական ապրանքները և այլն, կարող են պարունակել ինչպես բնական ծագման, այնպես էլ տեխնածին ռադիոիզոտոպներ: Հնարավոր ռադիոիզոտոպներ պարունակող նյութերի ճառագայթային մոնիտորինգը հանդիսանում է շրջակա միջավայրի համապարփակ ճառագայթային մոնիտորինգի բաղկացուցիչ մաս, իսկ ճառագայթային մոնիտորինգի առաջնային նպատակն է բնակչության ճառագայթահարման հնարավոր ուղիների վաղաժամ բացահայտումը:

Սույն խնդրի շրջանակում նախատեսվում է իրականացնել սահմանափակ քանակությամբ հանքանյութի՝ որպես շինանյութ (օրինակ՝ ՀՀ-ում արտահանվող սև, և/կամ վարդագույն, և/կամ դեղին տուֆ, մարմար, այլ հանքաքար և/կամ շինությունների ներքին և արտաքին հարդարման համար օգտագործվող շինանյութ), ինչպես նաև սահմանափակ քանակությամբ չոր սննդամթերքի (օրինակ՝ ալյուր և/կամ հացահատիկ և/կամ ձավարեղեն) ճառագայթային մոնիտորինգ:

Շինանյութում ռադիոիզոտոպների պարունակության մոնիտորինգի առաջնային նպատակն՝ այս փուլում, ՀՀ-ում արտահանվող հանքանյութերում/շինանյութերում ռադիոիզոտոպների պարունակության շտեմարանի ձևավորումն է:

Սննդամթերքում ռադիոիզոտոպների պարունակության մոնիտորինգի առաջնային նպատակն՝ այս փուլում, սննդամթերքի մոնիտորինգի համար օգտագործվող սարքերի կիրառելիության և նպատակահարմարության գնահատումն է:

Սույն խնդրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Տարբեր հանքավայրերից և/կամ շինանյութի վաճառման կետերից հետազոտման համար անհրաժեշտ քանակի և ծավալի շինանյութերի ձեռքբերում (մինչև 6 տեսակի շինանյութ):
- Ձեռք բերված շինանյութի մանրացում և ռադիոիզոտոպների պարունակության չափման համար անհրաժեշտ վիճակի բերում:
- Ձեռք բերված շինանյութերում ռադիոիզոտոպների պարունակության չափում և չափման արդյունքների արխիվացում:
- Տարբեր վաճառակետերից հետազոտման համար ընտրված սննդամթերքի անհրաժեշտ քանակի և ծավալի ձեռքբերում (մինչև 6 տեսակի սննդամթերք):
- Ձեռք բերված սննդամթերքը՝ դրանցում ռադիոիզոտոպների պարունակության չափման համար, անհրաժեշտ վիճակի բերում:
- Ձեռք բերված սննդամթերքում ռադիոիզոտոպների պարունակության չափում՝ երկու տարբեր սպեկտրոմետրիկ սարքերի միջոցով և չափման արդյունքների համեմատական վերլուծություն:
- Շինանյութում և սննդամթերքում ռադիոիզոտոպների պարունակության հետազոտությունների վերաբերյալ հաշվետվության մշակում:

5.3 Օդի ճառագայթային մոնիտորինգ:

ԱԷՄԳ տարածաշրջանային պրոյեկտի շրջանակում ՀՀ-ին տրամադրվել է AMS-02 մոդելի օդի աերոզոլների մոնիտորինգային կայան, որը տեղադրված է Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի տարածքում: Կայանը 24/7 ռեժիմով իրականացնում է օդում աերոզոլների գումարային ալֆա/բետա ակտիվության չափում, ռադիոակտիվ յոդի սպեկտրալ վերլուծություն, ինչպես նաև զամմա ճառագայթման դոզայի հզորության չափումներ: Կայանի բնականոն աշխատանքն ապահովելու, չափված տվյալների վերլուծության և չափման արդյունքներում


անոմալիաների գրանցման դեպքում վաղաժամ արձագանքման համար անհրաժեշտ է կայանի անընդհատ սպասարկում, խափանումների դեպքում դրանց նույնականացում և վերացում՝ ըստ հնարավորության, արտադրող կազմակերպության ներկայացուցիչների հետ կապի ապահովում, ինչպես նաև կայանի աշխատունակության ապահովում:


Սույն խնդրի շրջանակներում նախատեսվում իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Օդի ճառագայթային մոնիտորինգի AMS-02 կայանի սպասարկում:
- Կայանի կողմից չափված տվյալների պարբերական վերլուծություն:
- Չափման արդյունքներում անոմալիաների հայտնաբերման դեպքում հնարավոր պատճառների վերլուծություն:
- Կայանի խափանման դեպքում խափանման պատճառի/ների նույնականացում և հնարավորության դեպքում խափանման վերացում և կայանի բնականոն աշխատանքի վերականգնում: Խափանման վերացման անհնարինության դեպքում արտադրող կազմակերպության ներկայացուցիչների հետ խափանման վերացմանն ուղղված միջոցառումների պլանավորում:
- Մոնիտորինգի արդյունքների վերլուծություն, արդյունքների ներկայացման հաշվետվության ձևի մշակում:
- Տարվա կտրվածքով չափման արդյունքների հաշվետվության մշակում:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ


«Սիջուկային անվտանգության
կարգավորման կոմիտե
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ գործառն վարչ.
ՀՀ 900011040020
ՀՎՀՀ 02705793
Գլխավոր քարտուղար
Ա.Վարդանյան


(ստորագրություն) Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Միջուկային և ռադիացիոն
անվտանգության գիտատեխնիկական
կենտրոն» ՓԲԸ
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
հնէկրանկ
ՀՀ 2052022100061001
ՀՎՀՀ 02558849
Տնօրեն
Ա.Ամիրջանյան



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*



«Հրամ»

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության												
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531140/1	Փորձաքննության ծառայություն	.	.	14000000	31294000	31294000	31294000	48393000	48393000	48393000	67577550	67577550	67577550	67577550

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:



Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե»
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
 ՀՀ ՖՆ գործառն վարչ.
 ՀՀ 900011040020
 ՀՎՀՀ 02705793
 Գլխավոր քարտուղար
 Ա.Վարդանյան


 (ստորագրություն) Կ.Տ.


Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
 Ինտերբանկ
 ՀՀ 2052022100061001
 ՀՎՀՀ 02558849
 Տնօրեն
 Ա.Ամիրջանյան


 (ստորագրություն) Կ.Տ.


Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ Վճարման ժամկ ետը /ըստ վճար ման ժամ անա կացո ւյցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ չարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն